Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք!

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԴԻՄՈՒՄԸ

ԲՈԼՈՐ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ, ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ, ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻՆ, ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻՆ, ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻՆ

324
Հ-21

ԱԶԿՈՒՍՀՐԱՏ—ԲԱԿՈՒ—1937 թ.

Գրքերատարները՝ բոլոր յերկրների, միացեք

26 SEP 2006

324
Հ-27

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԴԻՄՈՒՄԸ

ԲՈԼՈՐ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ, ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ, ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻՆ, ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻՆ, ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻՆ

ԱԶԿՈՒՄՈՒՇՐԱՏ—ԲԱԳՈՒ—1937 թ.

17695

Сдано в произв. 8/XII-37 г. Подписано к печати 8/XII-37 г. Кол. печ. лист. 3/4. Колич. печатных знаков 23.040. Главлит № 6713. Азпартнешр № 193. Тип. „III Интернационал“ Баку, ул. Саратовца Ефима, 29. Зак. № 4550 тираж—10.200

1449
37

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

1937 թվականի դեկտեմբերի 12-ին Խորհրդային Միության աշխատավորները մեր Սոցիալիստական Սահմանադրության հիման վրա ընտրելու յեն ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի պատգամավորներ։

Բոլշևիկների կուսակցությունն ընտրություններին հանդես է գալիս բլոկ կազմած, դաշնակցած անկուսակցական բանվորների, գյուղացիների, ծառայողների, ինտելիգենցիայի հետ։ Գերագույն Խորհրդի՝ ընտրական ոկրուգներում գրանցված պատգամավորության թեկնածուները, —ինչպես կոմունիստները, նույնպես և անկուսակցականները,—առաջադրվել են գործարաններում՝ բանվորների և ծառայողների ընդհանուր ժողովների, զորամասերում՝ կարմիր-բանակայինների ժողովների, գյուղերում՝ կոլտնտեսականների և մենատնը-

տեսների ժողովների կողմից—կոմունիստների և անկուսակցականների ընտրական դաշինքի հիման վրա: Այդ թեկնածությունները միահամուռ կերպով պաշտպանել են աշխատավորների բազմաթիվ միտինգների կողմից ընտրական ոկրուգներում և շրջաններում:

Բոլշևիկների կուսակցությունը չի անջատում անկուսակցականներից, այլ, ընդհակառակը, գնում է ընտրություններին անկուսակցականների հետ բլոկ, դաշինք կնքած, գնում է բանվորների և ծառայողների պրոֆեսիոնալ միությունների, կոմսերիամիության և անկուսակցականների ուրիշ կազմակերպությունների ու ընկերությունների հետ բլոկ կազմած:

Հետևաբար, պատգամավորության թեկնածուներն ընդհանուր են լինելու ինչպես կոմունիստների, նույնպես և անկուսակցականների համար, յուրաքանչյուր անկուսակցական պատգամավոր՝ պատգամավոր և լինելու նաև կոմունիստների կողմից, ինչպես և յուրաքանչյուր կոմունիստական

պատգամավոր՝ պատգամավոր է լինելու անկուսակցականների կողմից:

Բոլշևիկների կուսակցությունը կոչ է անում բոլոր կոմունիստներին և համակրողներին համերաշխ կերպով, ինչպես մի մարդ, ձայն տալ ինչպես կուսակցական, այնպես էլ անկուսակցական թեկնածուներին:

Բոլշևիկների կուսակցությունը հույս ունի, վոր անկուսակցական ընտրողները նույնպես համերաշխ կերպով ձայն կտան կոմունիստական թեկնածուներին, ինչպես անկուսակցական թեկնածուներին:

Ընտրողները չի՞ք ուզեն, արդյոք, ձայն տալու բոլշևիկյան կուսակցության թեկնածուներին:

Արժանի՞ յե, արդյոք, բոլշևիկների կուսակցությունը ժողովրդի այն վստահությանը, վորի վրա նա հույս ունի առաջիկա ընտրություններին:

Ի՞նչ եր մեր հայրենիքն առաջ և ի՞նչ է դարձել նա խորհրդային իշխանության տարիներին բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ:

Ի՞նչ եր մեր հայրենիքը կալվածատերերի և կապիտալիստների տիրապետության որոք և ի՞նչ է ձեռք բերել նա բանվորների ու գյուղացիների իշխանության ժամանակ, բոլշևիկյան կուսակցության ղեկավարության ժամանակ:

Խորհրդային իշխանության տարիներին մեր յերկրի դեմքն արմատապես փոխվել է: Հետամնացության և միջնադարի, խավարի և անկուլտուրականության, աղքատության, աշխատավորների ճնշման յեվ իրավազրկության յերկրից, վորպիսին յեղել է հին Ռուսաստանը, մեր յերկիրը դարձել է առաջավոր, կուլտուրական, հզոր սոցիալիստական պետություն:

Այդ հաջողությունները մեր ժողովուրդը ձեռք է բերել բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ:

Ով ճգտում է այն բանին, վորպեսզի մեր հայրենիքն այսուհետև ևս լինի հզոր, կուլտուրական և ազատ սոցիալիստական պետություն, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցությանը, նա ձայն կտա կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուներին:

Մեր յերկրում ընդմիշտ լիկվիդացիայի յեն յենթարկվել տնտեսության կապիտալիստական սիստեմը և շահագործող դասակարգերը, վերացված է արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականությունը և վոչնչացված է մարդու շահագործումը մարդու կողմից: Վորպես մեր խորհրդային հասարակության անսասան հիմք՝ հաստատված է արտադրության գործիքների և միջոցների սոցիալիստական սեփականությունը:

Այդ համաշխարհային - պատմական հաղթանակը մեր ժողովուրդը ձեռք է բերել բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ:

Ով ճգտում է այն բանին, վորպեսզի Խորհրդային Միության աշխատավորներն ընդմիշտ ազատ լինեն շահագործման լծից, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցությանը, նա ձայն կտա կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուներին:

ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակն

ապահովել է արդյունաբերության ծաղկումը: Ցերկու հնգամյակների տարիներին ստեղծվել է առաջնակարգ արդյունաբերություն, հագեցած ժամանակակից տեխնիկայով: Մեր սոցիալիստական ֆաբրիկների ու գործարանների արտադրության ծավալը գերազանցում է նախապատերազմական ժամանակի արդյունաբերության արտադրության ծավալին ավելի քան ութ անգամ:

Այդ հաջողությունները մեր ժողովուրդը ձեռք է բերել բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ:

Ով ճգտում է այն բանին, վորպեսզի մեր ինդուստրիան այսուհետև ևս զարգանա, առաջ անցնելով կապիտալիստական յերկրներից, նա ճայն կտա բոլշևիկների կուսակցությանը, նա ճայն կտա կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուներին:

Մեր յերկրի գյուղական տնտեսության մեջ ավելի քան յերկու տասնյակ միլիոն մանր և մանրագույն անհատական գյուղացիական տնտեսությունների փոխարեն, նրանց թույլ տեխնիկայով և կալվածատիրոջ ու կուլակի բռնությամբ, աճել և ամրապնդվել են կալվածատերերից և կուլակներից ազատ խոշոր սոցիալիստական տնտեսությունները — ավելի քան 243 հազար կոլտնտեսություններ, վորոնք առատորեն մատակարարված են տրակտորներով, կոմբայններով և ժամանակակից գյուղատնտեսական այլ մեքենաներով: Մեր կոլտնտեսային գյուղական տնտեսությունը, խորհտնտեսությունների հետ միասին, յեթե նկատի ունենանք նրա բոլոր ճյուղերը, այժմ արտադրում է յերկու անգամ ավելի մթերքներ, քան թե նախապատերազմական ժամանակի գյուղական տնտեսությունը:

Համաշխարհային-պատմական այդ հաղթանակը ձեռք է բերել մեր ժողովուրդը բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ:

Ով ճգտում է այն բանին, վորպեսզի մեր կոլտնտեսություններն ու խորհտնտեսություններն այսուհետև ևս ծաղկեն,

տալով մեր յերկրին գյուղատնտեսական մթերքների առատություն, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցությանը, նա ձայն կտա կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուներին:

Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում ապահովել է աշխատավորների դրության արմատական բարելավումը: Ցարական Ռուսաստանում միշտ յեղել է գործազուրկների ահագին մասսա, ինչպես նա կա յուրաքանչյուր կապիտալիստական պետության մեջ նաև այժմ: Նյութական անապահովվածությունը, անվստահությունը դեպի վաղվա որը, աղքատությունը՝ յեղել են բանվոր դասակարգի մշտական բաժինը: Խորհուրդների իշխանության որոք ընդմիշտ վոչնչացվել է գործազրկությունը: Խորհրդային քաղաքացու առաջ, վորը ցանկանում է աշխատել, յերբեք չի ծառանա վաղվա որվա նկատմամբ անվրստահության հարցը: Մեր յերկրի բոլոր քաղաքացիներին որենքով ապահովված է աշխատանքի, հանգստի, ծերության ժամանակ նյութական ապահովության իրավունքը:

Այդ հաջողությունները մեր ժողովուրդը ձեռք է բերել բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ:

Ով ձգտում է այն բանին, վորպեսզի մեր յերկրի աշխատավորները հետագայում ևս ազատված լինեն ամեն մի գործազրկությունից ու վաղվա որվա նկատմամբ անվստահությունից, ով ցանկանում է բանվորների և ծառայողների նյութական-կենցաղային դրության հետագա բարելավումը, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցությանը, նա ձայն կտա կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուներին:

Ի՞նչ է յեղել գյուղացին կալվածատերերի և կապիտալիստների իշխանության որոք: Նա ամենազրկված, ամենաիրավազուրկ մարդն է յեղել: Նախահեղափոխական գյուղում կար ավելի քան 40 միլիոն չքավոր աղքատակություն, մարդիկ, վորոնց բաժինն եր սովը և աղքատությունը

նը։ Խորհրդային կարգերը, վորոնք լիկվիդացիայի յենթարկեցին կալվածատերերին, վոչնչացրին կուլակային ստրկությունը, գյուղացիներին հանձնեցին ավելի քան 150 միլիոն հեկտար կալվածատիրական և կուլակային հողեր ու ապահովեցին կոլտնտեսային կարգերի հաղթանակը,—ընդմիշտ գյուղացիությանն ազատեցին չքավորությունից և աղքատությունից ու ապահովեցին նրան ունևոր կուլտուրական կյանքի հնարավորությունը։

Այդ նվաճումները մեր ժողովուրդը ձեռք է բերել բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ։

Ով ճգտում է այն բանին, վորպեսզի մեր գյուղացիությունն ընդմիշտ ապահովված լինի աղքատության ու սովի վտանգից, ով ուզում է գյուղի ունևոր կյանքի հետագա վերելքը՝ նա ճայն կտա բոլշևիկների կուսակցությանը, նա ճայն կտա կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուներին։

Ցարական Ռուսաստանը յեղել է խավար ու ոգետ։ Ազգաբնակության ճնշող

մեծամասնությունն անգրագետ եր։ Իսկ խորհրդային յերկրում արդեն իրագործվել է ընդհանուր պարտադիր ուսումը — մեր դպրոցներում սովորում են 30 միլիոն յերեխա։ Կրթության իրավունքը բոլոր քաղաքացիների համար նվաճված և արձանագրված է մեր Սահմանադրության մեջ։ Ազգաբնակության գրագիտությունը յերկրում անցնում է 90 տոկոսից։ Շուտով յերկրում չի լինի վոչ մի անգրագետ քաղաքացի։ Գիտությունը, գրականությունը, թատրոնը, արվեստը՝ մեր յերկրում զարգանում են ավելի քան յերբևե։ Գիտության և արվեստի նվաճումները բոլոր քաղաքացիների սեփականությունն են հանդիսանում։

Այդ հաջողությունները մեր ժողովուրդը ձեռք է բերել բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ։

Ով ճգտում է մեր յերկրում լուսավորության հետագա աճին, ով ուզում է Խորհրդային Միության ժողովուրդների գիտության, գրականության ու արվեստի հետագա ծաղկումը՝ նա ճայն կտա բոլշևիկների

վիկների կուսակցությանը, նա ձայն կտա կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուներին։

Կինն ստրկուհի չեր ցարական Ռուսաստանում և մնում է ստրկուհի բոլոր կապիտալիստական երկրներում։ Միայն ԽՍՀՄ-ում նա ազատ է և իրավազոր։ Ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում սոցիալիզմի կառուցման և պետության կառավարման գործում կինը գնում է տղամարդու հետ ձեռք ձեռքի տված։ Միայն մեր երկրում է, որ պայմաններ են ստեղծվել ապահովված ու երջանիկ մայրության համար։ Խորհրդային օրենքները պաշտպանում են մոր իրավունքները յեվ յերեխաների առողջությունը։

Այդ հաջողությունները մեր ժողովուրդը ձեռք է բերել բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ։

Ով ձգտում է այն բանին, որպեսզի մեր խորհրդային կինը հետագայում ևս ազատ և իրավազոր լինի տնտեսության ու կառավարման բոլոր բնագավառներում, նա

ձայն կտա բոլշևիկների կուսակցությանը, նա ձայն կտա կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուներին։

Ցարական Ռուսաստանը յեղել է ժողովուրդների բանտ, ազգային ճնշման ու յերկպառակության յերկիր, նույնպես, ինչպես և բոլոր կապիտալիստական յերկրները հանդիսանում են ազգային ճնշման և գաղութային ստրկացման յերկրներ։ Միայն Խորհրդային Միության մեջ է, որ առաջվա ճնշված ժողովուրդները լիակատար ազատություն են ձեռք բերել ազգային ճնշումից և անիրավահավասարությունից։ Այժմ Խորհրդային Միության մեջ ԽՍՀՄ-ի ժողովուրդները միավորված են միասնական միութենական պետության մեջ՝ հավասարության ու կամավորության սկզբունքներով։ Խորհրդային Միությունը միակ յերկիրն է աշխարհում, որտեղ վերջնականապես լիկվիդացիայի յե յենթարկվել փոխադարձ անվստահությունը ժողովուրդների միջև և որտեղ ժողովուրդների հարաբերությունները կառուցվում են փոխադարձ վստահության, յեղ-

բայրական դաշինքի և բարեկամական դոր-
ծակցության սկզբունքներով:

Այդ համաշխարհային-պատմական հաղ-
թանակները մեր հայրենիքը ձեռք է բե-
րել բոլշևիկների կուսակցության ղեկավա-
րությամբ:

Ով ճգտում է այն բանին, վորպեսզի
Խորհրդային Միության ժողովուրդները
հետագայում ևս լինեն ազատ ու իրավա-
հավասար, ով ճգտում է ԽՍՀՄ-ի ժողո-
վուրդների բարեկամության հետագա ամ-
րապնդմանը՝ նա ճայն կտա բոլշևիկների
կուսակցությանը, նա ճայն կտա կոմու-
նիստների ու անկուսակցականների բլոկի
թեկնածուներին:

Մեր հայրենիքի նվաճումները նոր,
ազատ կյանքի կառուցման բնագավառում
ճշմարտապես մեծ են: ԽՍՀՄ-ի ժողո-
վուրդները դրանք նվաճել են բոլշևիկյան
կուսակցության ղեկավարությամբ՝ ներ-
քին և արտաքին թշնամիների դեմ մղած
պայքարում: ԽՍՀՄ-ի ժողովուրդների բա-
րեկամները ուրախ են այդ նվաճումների
համար և վողջունում են դրանք: Բայց

1449
37

Խորհրդային Միությունը վոչ միայն բա-
րեկամներ ունի: Նա ունի նաև թշնամի-
ներ: Դրանք, նախ և առաջ, լիկվիդացի-
այի յենթարկված շահագործող դասակար-
գերի մնացորդներն են յերկրի ներսում:
Յերկրորդ՝ դրանք կապիտալիստական յեր-
կրների ռեակցիոն ֆաշիստական ուժերն
են Խորհրդային Միության սահմաններից
դուրս: Յեթե ներքին թշնամիները վոչ-
բարթիվ են ու անզոր, ապա նրանց աջակ-
ցող արտաքին թշնամիները լուրջ վտանգ
են ներկայացնում մեր հայրենիքի ազա-
տության ու անկախության համար: Մեր
հայրենիքն այդ վտանգից ղերծ պահելու
համար հարկավոր է ունենալ, նախ՝ լավ
կազմակերպված պատժիչ որգաններ՝ ըն-
դունակ անվնաս դարձնելու մեր հայրենիքը
լրտեսներից, վնասարարներից, դիվերսանտ-
ներից և խորհրդային ժողովրդի մյուս թշ-
նամիներից, յերկրորդ՝ հարկավոր է ունե-
նալ լավ կազմակերպված և տեխնիկապես
զինված կարմիր բանակ՝ ընդունակ պաշտ-
պանելու խորհրդային սահմանները դրսի
հարձակումներից. վերջապես հարկավոր է

ԱԱՍՍՀ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ունենալ լավ մտածված և հետևողականորեն կիրառվող խաղաղության քաղաքականություն՝ ընդունակ մերկացնելու կապիտալիստական յերկրների ռազմատենչ շրջանների զավթողական քաղաքականությունը։ Մի շարք տարիների ընթացքում խորհրդային իշխանությունը կարողացել է հասնել այն բանին, վոր մեր հայրենիքն այժմ իր տրամադրության տակ ունի ինչպես ստուգված պատժիչ որգաններ և լավ զինված Կարմիր բանակ, նույնպես և հետևողականորեն կիրառվող խաղաղության քաղաքականություն արտաքին հարաբերությունների բնագավառում։ Միայն այդ նվաճումների առկայությամբ է բացատրվում այն փաստը, վոր խորհրդային ժողովուրդը, ահա, արդեն 16 տարի յե, ազատվել է ռազմական ընդհարումներից, ոգտվում է խաղաղ կյանքի բարիքներից և հնարավորություն ունի շարունակելու իր խաղաղ աշխատանքը։

Այդ հաջողությունները մեր հայրենիքի ազատության և անկախության պաշտպանման բնագավառում ԽՍՀՄ-ի ժողովուրդները նվաճել են բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ։

Ով ճգտում է այն բանին, վորպեսզի ԽՍՀՄ-ի աշխատավորները հետագայում ևս ոգտվեն խաղաղ աշխատանքի բարիքներով, ով ուզում է մեր հայրենիքի ազատությունն ու անկախությունը՝ նա ճայն կտա բոլշևիկների կուսակցությանը, նա ճայն կտա կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուներին։

Այդպես են մեր հայրենիքի նվաճումները հեղափոխության տարիների ընթացքում, վոր ձեռք են բերվել բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ։

Այդպես են բոլշևիկների կուսակցության գործերը և պայքարի արդյունքները, կուսակցության, վորի խոսքը յերբեք չի տարբերվել գործից և վորի խոստումները յերբեք չեն դարձել դատարկ հնչյուն։

Ահա թե ինչու բոլշևիկների կուսակցությունը թույլ է տալիս իրեն հուսալու ժողովրդի վստահությունն առաջիկա ընտրություններին։

Ահա թե ինչու բոլշևիկների կուսակցությունն իրավունք ունի հուսալու, վոր ընտրողները միահամուռ ձայն կտան կոմունիստների ու անկուսակցականների բլոկին։

Ընկեր ընտրողնե՛ր.

Ընտրական կամպանիայի ընթացքում յերևան ե յեկել վորոշ կոմունիստների ու անկուսակցականների ձգտումը՝ ձայն տալու անպայման և միայն լիդերներին, կուսակցության ու կառավարության ղեկավարներին, անկախ այն բանից, թե վոր ընտրական ոկրուգում են նրանք գրանցված։ Այդ ընկերները, ակներևաբար, չեն հասկանում, վոր օրենքի համաձայն յուրաքանչյուր թեկնածու կարող ե քվեարկվել միայն մի ընտրական ոկրուգում։ Այդ ընկերները, ակներևաբար, չեն հասկանում, վոր բոլշևիկների կուսակցության և անկուսակցականների պաշտպանած այս կամ այն թեկնածուի քվեարկությունը, վոչ միայն տվյալ թեկնածուի համար քվեարկելն ե, այլ, ամենից առաջ, այն քաղաքականության համար քվեարկելը, վոր անց ե

կացնում բոլշևիկների կուսակցությունն անկուսակցականների հետ միասին և վորը պարտավորվում ե իրագործել տվյալ թեկնածուն։ Խնդիրը կայանում ե նրանում, վոր թեկնածուները լինեն կայուն և ժողովրդի գործին նվիրված մարդիկ և վորպեսզի ընտրողները համերաշխ կերպով ձայն տան բոլոր թեկնածուներին, յեթե մինչև իսկ նրանցից վոմանք այժմ իրենց յերիտասարդության հետևանքով ընդհանուրի կողմից ճանաչված ղեկավարներ չեն հանդիսանում։ Խորհրդային կարգերի առանձնահատկությունը հենց նրանում ե կայանում, վոր նա ապահովում ե մարդկանց, նրանց ընդունակությունների, նրանց տաղանդների արագ աճը, վոր դեռևս յերեկ քիչ հայտնի մարդիկ կարճ ժամկետում կարող են դառնալ հանրահայտնի գործիչներ, վորոնք ընդհանուրի հարգանքն են վայելում։

Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտրոնական Կոմիտեն կոչ է անում բոլոր կոմունիստներին և համակրողներին՝ ձայն տալու անկուսակցական թեկնածուներին նույնպիսի միաբանությամբ, ինչպես վոր նրանք պետք է ձայն տան կոմունիստ-թեկնածուներին:

Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտրոնական Կոմիտեն կոչ է անում բոլոր անկուսակցական ընտրողներին՝ քվեարկելու կոմունիստ թեկնածուներին նույնպիսի միաբանությամբ, ինչպես նրանք ձայն կտան անկուսակցական թեկնածուներին:

Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտրոնական Կոմիտեն կոչ է անում բոլոր ընտրողներին՝ 1937 թվականի դեկտեմբերի 12-ին, վորպես մի մարդ, բոլորը գնալ քվեատուփերի մոտ՝ Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի պատգամավորների ընտրությունների համար:

Չպիտի լինի վոչ մի ընտրող, վորը չոգտագործի խորհրդային պետության գերագույն որգանի պատգամավորների ընտրության իր պատվավոր իրավունքը:

Չպիտի լինի վոչ մի ակտիվ քաղաքացի, վորն իր քաղաքացիական պարտքը չհամարի աջակցելու առանց բացառության բոլոր ընտրողների մասնակցությանը Գերագույն Խորհրդի ընտրություններին:

1937 թվականի դեկտեմբերի 12-ի որը պիտի դառնա Լենինի-Ստալինի հաղթական դրոշի շուրջը ԽՍՀՄ-ի բոլոր ժողովուրդների աշխատավորների համախմբվելու մեծ տոնի որ:

ԲՈԼՈՐԴ ԴԵՊԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Կեցցե՛ և թո՛ղ ամրապնդվի մեր հզոր հայրենիքը — Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը:

4076

Կեցցե՛ մեր խորհրդային Սոցիալիստական Սահմանադրությունը:

Կեցցե՛ բանվորների և գյուղացիների միությունը:

Կեցցե՛ կոմունիստների և անկուսակցականների միությունը խորհրդային պետության գերագույն որգանի առաջիկա ընտրություններում:

Կեցցե՛ խորհրդային իշխանությունը:

Կեցցե՛ Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

1937 թ. դեկտեմբերի 6.

ՀՀ Ազգային գրադարան
NL0202134

10 ԿՍՊ.

379

YMUM ITTIFAQ QOMMUNIST (bolşeviqlər) PARTIJASЬ MƏRKƏZI QOMITETININ MYRAÇIƏTNAMƏSI

Bytyn seciçilərə, işcilərə, işci qadьnlara, kəndlilərə və kəndli qadьnlara, Qьzыl Orduja və sovet intelligensijasьna

AZPARTNƏŞR—BAKЬ—1937